

ՎԻՃԱԿԱԿՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ- ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՒ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ԿԵՆՍԱՄԱԿԱՐԳԱԿԻ ԵՒ ԱՊՐՈՒՍՏԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԽԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Վիճակագրության կեդրոնական վարչության ընդհանուր տնօրեն դոկտ. Մարալ Կիտանեան եւ ընկերային հարցերու նախարարության ընդհանուր տնօրեն Նամաս Քրնասան երկու ստորագրեցին համաձայնութիւն մը՝ Լիբանանի ամբողջ տարածքին կատարուելիք ապրուստի եւ կենսամակարդակի վերաբերեալ ուսումնասիրութեան մը մասին:

Ստորագրութեան արարողութեան ներկայ գտնուեցան նախարար Ասատ Տիպա, ՄԱԿի Բարգաւաճման ծրագրի ներկայացուցիչ Նատա Նաշէֆ, ԵՈՒՆԵՍԿՅԻ ներկայացուցիչներ՝ Արամ Պարարտանյէ եւ Ալի Չէյն, ՄԱԿի Բնակեցման սնտուկի ներկայացուցիչ Ուսամա Քորտասիի, Վերաշինութեան եւ Բարգաւաճման Խորհուրդի ներկայացուցիչ Սամիրա Սուէյտան, Բնակեցման Ազգային յանձնախումբի ներկայացուցիչ տոքթ. Մարուան Հուրի եւ Համաշխարհային դրամատան ներկայացուցիչ Սեպասթիան Տրսո:

Շաբ.ը՝ էջ 3

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԻՈՎ ԱՍՏՈՒԱՅԻՆ ԿԻՐՈՒՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Այս առիթով մեր ժողովուրդի զաւակներուն ուղղած հայրապետական պատգամը: Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդի զաւակները լսելու վեհափառ հայրապետին պատգամը եւ յորդորենք, այս տարուան ընթացքին Աստուծոյ խօսքը մեր կեանքին եւ արժեքներուն չափանիշը եւ ուղեցոյցը դարձնելու:

ՄԱՀԱԶԴ Տիկին Ալիս Միսիրեան-Սաչատուրեան եւ զաւակունք Տէր եւ տիկին տոքթ. Բաֆֆի Մեարտպեան եւ ընտանիք Տէր եւ տիկին Վազգէն Միսիրեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Ամար Բաժնաչէք եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց Հարազատին՝ ԿԱԸ ԸԱԶԱՅԻ մահը, որ պատահեցաւ Երեւանի, 14 Յունուար 2003ին, Փարիզի մէջ: Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Փարիզի մէջ: Կեանքը ընդունելի իբրեւ մահազոյ: Զանգուցեալին հոգւոյն համար հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Շաբաթ, 25 Յունուար, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Փարիզի Ա. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցոյ մէջ: • Fax 001-818 8316993 եւ E-mail: rmesrobian@aol.com

ՄԱՀԱԶԴ Տիկին Արփի Առաքելեան եւ զաւակները՝ Պաղտիկ, Արա, Շանթ եւ Սեւակ Վարդան քննչ. եւ երջկին Առաքելեան եւ ընտանիք Տէր եւ տիկին Նուպար Առաքելեան եւ ընտանիք Տիկին Լիոնէ Զաքարեան եւ ընտանիք Տէր եւ տիկին Վահէ Առաքելեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Արշակ Ճէմճեան Տէր եւ տիկին Յովսէփ Նանճեան եւ ընտանիք Տիկին Սիլվա Ճէմճեան եւ զաւակունք Տիկին Մարկո Քրիստիան եւ ընտանիք եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, փեսային, քենեկային եւ Հարազատին՝ ԺԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ (Ծնեալ Ալեքսանտրէթ, 1923ին) մահը, որ պատահեցաւ Երեւանի, 21 Յունուար 2003, յետ կարճատեւ հիւանդութեան: Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, 22 Յունուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Սիւնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանդուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համատի Ազգային գերեզմանատունը: • Ներկայ ընդունելի իբրեւ մահազոյ: • Յաւակցութիւններ կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Անթիլիանի մայրուղի, «Հաւա Չիլըն» շէնք, 4րդ սրկ, Հինգշաբթի 23, Ուրբաթ 24 եւ Շաբաթ 25 Յունուարին:

ԶՕՐ. ԼԱՇՈՒՏԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախագահ Կօր. Էմիլ Լաճուտ երէկ Պապուտայի մէջ ընդունեց կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Ապտէլ Ռահիմ Մրատը, որուն հետ քննարկեց քաղաքական եւ կրթական մարզերուն մէջ արձանագրուած վերջին զարգացումները, յատկապէս ուսուցիչներուն դասագումարի կապուած հարցեր: Քննարկուած առարկայ դարձան նաեւ ուսուցիչներու սենտիքներուն կողմէ ներկայացուած պահանջներուն յարմար լուծումներ ապահովելու միջոցառումները:

Նախագահ Լաճուտի այցելեց աշխատանքի նախարար Ալի Քանսո: Քննարկուեցան ընդհանուր Հարցեր, ինչպէս ընկերային ապահովագրութեան ազգային սնտուկին կացութիւնը եւ ծեղրութեան թոշակի օրէնքի նախագիծին մէջ կատարուած փոփոխութիւնները: Նախագահ Լաճուտ շեշտեց նշեալ ծրագրին գործադրութեան անհրաժեշտութիւնը եւ ըստւ, որ անիկա անյաւազ պէտք է քննարկուի կատարուած նիստին եւ ապա փոխանցուի

խորհրդարանին եւ վաւերացուի: Նախագահ Լաճուտ ընդունեց տեղեկատուութեան նախարար Զաքի Արիտին, որուն հետ քննարկեց լիբանանեան ներքին բեմը յուզող Հարցեր, ինչպէս նաեւ շրջանային իրադարձութիւնները, յատկապէս պաղեստինեան եւ իրաքեան Հարցերուն զարգացումները: Նախագահական պալատի հիւրերէն դարձան նաեւ կաթողիկէ ասորի Համայնքի Իգնատիոս Պոթրոս Ը. Ապտէլ Ահատ պատրիարք եւ երեսփոխան Մոհամէտ Պրժմուր:

ՉՈՒՐԻ ԵՒ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ՀԱՐՑԵՐԸ ՊԷՏՔ Է ԼՈՒԾՈՒԻՆ

Ուժանիւթի եւ ջուրի Հարցերու նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պալտուն երէկ Պէյրութի ջուրի ընկերութիւններէն պահանջեց ջուրի յետնեալ բոլոր պարտքերը հաստատել: Ան նաեւ պահանջեց վճարել ընթացիկ տարուան հաշուեցուցներուն վճարումները՝ ելեկտրականութեան ընկերութեան: Պալտուն պահանջեց, որ ներկայացուի ծրագիր մը՝ նուազեցնելու Համար ելեկտրականութեան եւ ջուրի բաժանորդագրութեան տուրքերը: Պալտուն ընդգծեց, որ

անհրաժեշտ է վերջ տալ «Վարձակումներուն» եւ գործակցի քաղաքապետարաններուն հետ՝ ջուր եւ ելեկտրականութիւն ստանալու Համար: Պալտուն նշեալ յայտարարութիւնները կատարեց ջուրի եւ ելեկտրականութեան ընկերութիւններու նախագահներուն հետ գումարած իր

ժողովին ընթացքին: Ժողովին քննարկուեցան ջուրի ընկերութիւններուն եւ ելեկտրականութեան ընկերութեան միջեւ գործակցութեան կառելութիւնները: Պալտուն ջուրի ընդհանուր ընկերութեան յղեց շրջաբերական մը, որուն մէջ պահանջեց վճարել ելեկտրականութեան հաշուեցուցները:

ՎԱՌԵԼԱՆԻԹԵՐՈՒ ԵՒ ՍԱԿԱՑՈՅՑ

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պալտունի որոշումով՝ պենսիոնի սակը արձանագրեց 200 լ. ոսկիի, մալուրը՝ 100 լ. ոսկիի, իսկ ֆիուլ օլլը՝ 8 տոլարի յաւելում: Հետեւաբար վառելիքի յետընդ որոշումով սակը հետեւեալ պատկերը. Առանց կապարի 98 օքթան պենսիոնի թիւթը՝ 21,500 լ. ոսկի, առանց կապարի 95 օքթան պենսիոնի՝ 20,600 լ. ոսկի, առանց կապարի 92 օքթան պենսիոնի՝ 20,300 լ. ոսկի, առանց կապարի 90 օքթան պենսիոնի՝ 20,100 լ. ոսկի, քարիւղը՝ 8,800 լ. ոսկի, մալուրը՝ 9,100 լ. ոսկի, սիկլը օլլը՝ 9,300 լ. ոսկի, իսկ ֆիուլ օլլը՝ 226 տոլար:

ԲԶԻՋԱՅԻՆ ԶԵՈՒԶԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ ԶԱՍԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ

Հաղորդակցութեան միջոցներու նախարարութիւնը երէկ խոստումներ ստացաւ բիւրջային հեռաձայնի «Լիպանսէլ» եւ «Սելիս» ընկերութիւններուն ներկայացուցիչներէն, թէ երեկոյեան ուշ ժամերուն երէկ շատ հաւանաբար ստորագրած պիտի ըլլան նախարարութեան կողմէ պատրաստուած աշխատանքի ուր պայմանագիրը, առանց հարցի առեւտրի: Նշենք, որ երէկ ամբողջացաւ պայմանագրին քննարկումը եւ բիւրջային մայր ընկերութիւններէն՝ ֆինանսականներու եւ ֆրանսիականներու ստացուեցաւ համաձայնութիւններ՝ կատարուած բոլոր փոփոխութիւններուն շուրջ: Նախարարութեան համաձայն, ցանցը արդիականացնելու համար ճշդուած 12 միլիոն տոլար արժողութեամբ ծրագրին գործադրութեան համար հաւասարակալ (իրաքանչիւրը՝ 4 միլիոն տոլար) պիտի վճարեն ընկերութիւններն ու նախարարութիւնը: Համաձայնուեցաւ նաեւ, որ ելեւմտական եւ արեւմտահայկական օրինական քննութեան պարտականութիւնը ստանձնէ «Էրիքար»ը, որ արդէն իսկ նշեալ նպատակով խմբակ մը ուղարկած է Լիբանան: Միւս կողմէ, նախարարութիւնը կ'աշխատի պատրաստել բիւրջային հեռաձայնի ընկերութիւններուն ներդրումներուն եւ ելեւմտական վիճակին մասին գումարներուն տախտակը:

«ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

30վահանէ Ֆարաճեան 200 տոլար 30վահանէ Մարիա Ուզունեաներու յիշատակին առիթով, Համբիկ Դաւիթեան 50,000 լ. ռ. ՀԱՅ ԴԱՏԻ ՖՈՆՏԻՆ 300 տոլար

www.lemagan.com NEW! ARMENIAN CAUSE (HAY TAD) L.Y.A. History - Martyrs - Chapters - RAZMIG - Research - Monthly News - A.R.F. History - Armenian History - Armenian Genocide - Chevakik - Artsakh - Lisbon 5 - Armenians in Lebanon - links - Icons & photos

ՆՇԱՐ ԻՐԱՔԻ ՓՐԿԱՐԱՐ ԽԱՂԱՂԱՐԱՐ ԹՈՒՐՔԻԱՆ...

Թուրքիոյ մեծագոյն քաղաքը՝ յոյներէն բռնագրաւուած Պոլիսը երէկ թատերաբեմ դարձաւ շրջանային քաղաքական սենարիոյ մը, որուն դերակատարները եթէ ծանօթ չի մը, որուն դերակատարները եթէ ծանօթ չի մը... Այո, թատերաբեմ, որովհետեւ շրջանային հինգ երկիրներու՝ Եգիպտոսի, Իրանի, Սուրիոյ, Մեծուսկանի Արաբիոյ, Յորդանանի, առաւել՝ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներուն ժողովը Պոլսոյ մէջ գումարելը թատրոնի բնոյթ կրնայ ունենալ միայն, ոչ աւելին: Թէ ինչո՞ւ, պարզ է: Իրաքի հարցով մտահոգ վերոյիշեալ հինգ երկիրները կրնան իրապէս լուրջ ըլլալ իրենց կեցուցածքին մէջ, սակայն պարմանային հոն է, որ անոնք իրենց սայլը կը լծեն ամէնէն անյուրջ, լաւախաղաց, անվստահելի եպին՝ Թուրքիոյ: Այն Թուրքիոյ, որ մէկ կողմէ իր խարխախտութիւնը վարձու պիտի տայ Իրաքի դէմ պատերազմի մը համար, որուն դիմաց պիտի գանձէ մեծագումար տոյարներ, իսկ միւս կողմէ՝ իր երկրին մէջ շրջանային ժողով կը հրաւիրէ յանուն տարածաշրջանի անդորրութեան, յանուն «եղբայրական» Իրաքի անվտանգութեան: «Գնա՛ մեռիր, եկո՛ւր սիրուն»ի պատմութիւնն է պարզապէս: Թրքական նոր վարչակազմին ճիգն է, աւելի ճիշդ՝ «խաղ»ի փորձն է ասիկա: Էրտողան եւ ընկերներ լարախաղացութեամբ, խաբէութեամբ կը շանան շրջանային դեր մը ձեռք ձգել ներկայի խառնաշփոթ օրերուն՝ պանապան դիմակներ գործածելով, սակայն ապարդիւն: Անոնց դիմակը ի սկզբանէ վար առնուած է արդէն առաջին հերթին երկրպագիներուն կողմէ, որուն պուսպ եւ քաղաքական ապացոյցը տուին անոնք Դեկտեմբերին, Քոփենհայնի վեհաժողովին... Տակաւին չի օսուի պէս հարցին մասին, թէ ամէն մարդ իր դրան առջեւ պէտք է աւելնէ Այլ խօսքով, Թուրքիա փոխանակ «այլոց» հարցերուն յուժան թատերաբեմ դառնալու, նախ եւ առաջ լուծել իր այնքան կուտակուած հարցերը, իր ճիտին պարտք դրուած քաղաքական անձամանցի թղթածրարները, ինչպիսին են՝ քրտական, կիպրական, հայկական դատերը, ներքին իմաստով բազում խնդիրները՝ մարդկային իրաւանց ոտնակոխումներն սկսեալ, եւ այլն, եւ այլն: Վերադառնալով ժողովին, երբակցութեանը՝ Իրաքի իրապէս կողմէն Թուրքիա, որ տարածաշրջանին մէջ հայկական Եփրատի եւ Տիգրիսի ջուրերուն հարցով ռիսկելի թշնամին է Իրաքի, Սուրիոյ ու ընդհանրապէս արաբական աշխարհին, որ օրն ի օրն արաքները հալածող ու պանոսք բնաջնջելու ձգտող (եթէ կարենայ անշուշտ) Թէլ Աւելի սերտ գործակցիցն է ռազմական առումով, որ պատրաստ է Ինճիրիլի խարխախտութեամբ արեւմտեան «Է.Ֆ. 16»երուն առջեւ՝ դէպի Պաղատա իրոսարշաւի համար, չի՛ կրնար, իրաւունք չունի՛ ինքզինք իբրեւ խաղաղարար ծախելու աշխարհին, մասնաւոր Միջին Արեւելքին:

Սակայն ինչո՞ւ սակայն թատերաբեմ դառնալու, նախ եւ առաջ լուծել իր այնքան կուտակուած հարցերը, իր ճիտին պարտք դրուած քաղաքական անձամանցի թղթածրարները, ինչպիսին են՝ քրտական, կիպրական, հայկական դատերը, ներքին իմաստով բազում խնդիրները՝ մարդկային իրաւանց ոտնակոխումներն սկսեալ, եւ այլն, եւ այլն: Վերադառնալով ժողովին, երբակցութեանը՝ Իրաքի իրապէս կողմէն Թուրքիա, որ տարածաշրջանին մէջ հայկական Եփրատի եւ Տիգրիսի ջուրերուն հարցով ռիսկելի թշնամին է Իրաքի, Սուրիոյ ու ընդհանրապէս արաբական աշխարհին, որ օրն ի օրն արաքները հալածող ու պանոսք բնաջնջելու ձգտող (եթէ կարենայ անշուշտ) Թէլ Աւելի սերտ գործակցիցն է ռազմական առումով, որ պատրաստ է Ինճիրիլի խարխախտութեամբ արեւմտեան «Է.Ֆ. 16»երուն առջեւ՝ դէպի Պաղատա իրոսարշաւի համար, չի՛ կրնար, իրաւունք չունի՛ ինքզինք իբրեւ խաղաղարար ծախելու աշխարհին, մասնաւոր Միջին Արեւելքին: Սակայն ինչո՞ւ սակայն թատերաբեմ դառնալու, նախ եւ առաջ լուծել իր այնքան կուտակուած հարցերը, իր ճիտին պարտք դրուած քաղաքական անձամանցի թղթածրարները, ինչպիսին են՝ քրտական, կիպրական, հայկական դատերը, ներքին իմաստով բազում խնդիրները՝ մարդկային իրաւանց ոտնակոխումներն սկսեալ, եւ այլն, եւ այլն: Վերադառնալով ժողովին, երբակցութեանը՝ Իրաքի իրապէս կողմէն Թուրքիա, որ տարածաշրջանին մէջ հայկական Եփրատի եւ Տիգրիսի ջուրերուն հարցով ռիսկելի թշնամին է Իրաքի, Սուրիոյ ու ընդհանրապէս արաբական աշխարհին, որ օրն ի օրն արաքները հալածող ու պանոսք բնաջնջելու ձգտող (եթէ կարենայ անշուշտ) Թէլ Աւելի սերտ գործակցիցն է ռազմական առումով, որ պատրաստ է Ինճիրիլի խարխախտութեամբ արեւմտեան «Է.Ֆ. 16»երուն առջեւ՝ դէպի Պաղատա իրոսարշաւի համար, չի՛ կրնար, իրաւունք չունի՛ ինքզինք իբրեւ խաղաղարար ծախելու աշխարհին, մասնաւոր Միջին Արեւելքին:

ՎԱՐԱՅ ԶԱՅՆ ՎԱՐԱՅ ԶԱՅՆ Այսօր՝ Ուրբաթ 24 Յունուար 2003ին, կեսօրուան ժամը 12:00ին «Համայն Չայ»-ն ունկնդրեց Ը. Յ. Դ. Լիբանանի Ըայ Դատի Մարմնի պատրաստած «Հայ Դատը այսօր» յայտագիրը: Զաբթուան մտածումը Լուրեր՝ Հայ Դատի մասին Պատմական ակնարկ՝ անցեալէն այսօր Հարցազոյց՝ ընկ. Մուրադ Փափազեանի հետ, Փարիզի մէջ կազմուած եւ կազմալուծուած «Հայերու եւ թուրքերու միջեւ մերձեցման ֆորում»-ին մասին: •Կրկնութիւնը՝ Կիրակի 26 Յունուար 2003ին, կեսօրուան ժամը 12:00ին:

ՄԱՀԱԶԴ Տէր եւ տիկին Նուպար Մանկասարեան Օր. Արփի Մանկասարեան Տէր եւ տիկին Ռուբէն Մանկասարեան եւ զաւակունք Տիար Զուէն Մանկասարեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Արսէն Մելքոնեան եւ զաւակունք Տիար Գրիգոր Մելքեան Տիկին Երջան Դերձակեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Մարգ Կրկան եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց քրոջ, հօրաքրոջ եւ Հարազատին՝ ՊԵՐՃՈՒՂԻ ՊԵՕՃԷՔԵԱՆԻ (Ծնեալ՝ ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ) մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 23 Յունուար 2003ի առաւօտեան: Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 23 Յունուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Սիւնի Ս. Սարգիս եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆերի Շրպփէթի Ազգային գերեզմանատունը: • Ներկայ ընդունելի իբրեւ մահազոյ: • Յաւակցութիւններ կ'ընդունուին հանգուցեալին եղբոր՝ Նուպար Մանկասարեանի բնակարանը, Սին Էլ Ֆիլ, Ուրբաթ 24, Շաբաթ 25 եւ Կիրակի 26 Յունուարին:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՓՕԼ ԱՅԱՆԵԱՆԸ

Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս երէկ ընդունեց Պուրճ Համուտի առեւտրականներու միութեան նախագահ Փօլ Այանեանը, որուն հետ քննարկեց լիբանանահայ համայնքին վիճակը, ինչպէս նաեւ լիբանանեան ներքին բեւեր յուլող հարցեր, յատկապէս՝ երկրի տնտեսական ծանր վիճակը եւ քաղաքացիներուն վրայ անոր ունեցած ժխտական ազդեցութիւնները:

Հանդիպումին Արամ Ա. կաթողիկոս եւ Այանեան դրուատեցին հայկական Ս. Ծննդեան օրը՝ 6 Յունուարը պետական տօն հռչակելու որոշումը:

Այանեան շնորհակալութիւն յայտնեց պետական բոլոր պատասխանատուներուն, եւ յոյս յայտնեց, որ հայ համայնքի պահպանման կը վստահուի յաւելեալ պատասխանատուութիւններ եւ պաշտօններ:

ԴԱՍԱԽՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆՈՒԱԳԱՒՈՒՄԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հ.Բ.Ը.Մ. - Հ.Ե.Ը.ի «Անդրանիկ» մշակութային միութեան կազմակերպած երաժշտական երեկոներու շարքին առաջինը՝ «Երաժշտական ընդմիջում - 1»-ը, տեղի ունեցաւ երէկ, Հինգշաբթի, 23 Յունուարի երեկոյեան ժամը 8:00ին, Հ.Բ.Ը.Մ.ի «Տեմիրձեան» կեդրոնին մէջ:

Երաժշտական այս առաջին հանդիպումին դասախոսն էր երաժիշտ եւ երաժշտագէտ Էթիէն Քիւֆէյեան, որ ֆրանսերէն լեզուով ներկայացուց «նուագախումբը դարերու ընդմէջէն» նիւթը:

Դասախոսը հետաքրքրական եւ հարորդական ձեւով կատարեց նուագախումբին պատմականը, անոր ծագման ու պարզացման հանգրուանները՝ սկսելով միջնադարէն եւ հասնելով մինչեւ ժամանակակից երաժշտութիւն: Ան յուսանկարներով ծանօթացուց տարբեր դարերու ընթացքին օգտագործուած երաժշտական գործիքները, որոնք հետագային տարբեր ձեւափոխումներ առնալով, վերածուեցան այսօրուան մեծ նուագախումբերու գործիքներուն:

ԲԶԻՋԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ...

Շարունակուած Ա. էջէն

Երեսփոխան Ժորժ Նաժըմ ընդգծեց, որ կառավարութիւնը լիբանանցի ժողովուրդը աղքատացուց: Ան մերժեց բջիջային հեռաձայնի մարկին ապապետականացումը եւ պահանջեց միայն վարչական ապապետականացումներ կատարել:

Նաժըմ կառավարութեան կողմէ դրամատուներուն մէջ պետեղուած գումարներու տոկոսներուն վրայ դրուած 5 առ հարիւր տուրքը նկատեց օրէնքի խախտում եւ դիտել տուաւ, որ պետք է դրամատուները կրեն այդ բեռը:

Երեսփոխան Անթուան Դանէմ դիտել տուաւ, որ սահմանադրութեան խախտում է Լիբանանի մէջ գործադրուած օրէնքը եւ կոչ ուղղեց՝ սրբազրելու հաւասարակշռութեան եւ ազգային մասնակցութեան իմաստով արձանագրուած խախտումները: Ան պիտուէի նախագիծը նկատեց երկրին ընդհանուր պարտքին նախագիծը:

Երեսփոխան Անուար Խալիլ անդրադարձաւ կառավարութեան որդեգրած ելեւմտական բարեկարգումներու ծրագիրին եւ կասկած յայտնեց, թէ այս կառավարութիւնը կարող է նուազեցնելու պարտքերը:

Երեսփոխան Դասան Մուխայպէր պահանջեց, որ նախագահ Վոր. Էմիլ Լահուտի հովանաւորութեամբ ազգային երկիւստութեան յստակ ծրագիր մը մշակուի եւ խորհրդարանի նախագահին կամ տնտեսութեան եւ ընկերային հարցերու խորհուրդին կողմէ գումարով ժողով մը, որուն ընթացքին քննարկուին բարեկարգումներու թղթածրարները:

Մուխայպէր կոչ ուղղեց խորհրդարանին՝ լրջօրէն ստանձնելու ապապետականացման ընդհանուր թղթածրարը՝ սկսեալ բջիջային հեռաձայնէն:

Երեսփոխան Ատնան Արաբժի Վորակցութիւն յայտնեց՝ ստեղծելու շինչ ընդդիմադրութիւն մը, որ նկատի ունենայ երկրին գերագոյն շահերը եւ յարգէ քաղաքացիներուն պագումները, ինչպէս նաեւ քաղաքական ղեկավարութիւնները:

Արաբժի յայտնեց, որ կառավարութեան դէմ արշաւները եւ ամբաստանութիւնները պարտքերուն եւ միստումներուն գծով երբէք կարելու չեն եւ հաշուի պիտի չառնուին:

Երեսփոխան Ապտալա Քապի երկրին հիմնական հարցը նկատեց միստումները:

Երեսփոխան Փիեռ Ժեմալէլ նկատել տուաւ, թէ արձանագրուած նիւթական բացին հիմնական պատճառներն են մէկն է ժողովուրդին վստահութեան չզոյրութիւնը իշխանութեան եւ հաստատութիւններուն նկատմամբ, ինչպէս նաեւ 90ական թուականներէն ի վեր գոյութիւն ունեցող քաղաքական խախտումները:

Իբրեւ լուծում Ժեմալէլ ըսաւ, որ հարկ է կա-

յացնել արդար ընտրութիւններ եւ կազմել ազգային միասնութեան կառավարութիւն մը, որ կը ներկայացնէ բոլոր կողմերը, ինչպէս նաեւ ջնջել յաղթողի եւ յաղթուողի տրամաբանութիւնը, որպէսզի կուսակցութիւնները նաեւ ունենան իրենց քաղաքական դերակատարութիւնը:

ԵՐԵԿՈՅԵԱՆ ՆԻՍՍ

Երեկոյեան նիստին առաջին խօսք անողը եղաւ Երեսփոխան Ռուամ Սատտ, որ քննադատեց բջիջային հեռաձայնի ընկերութիւններուն մէջ ներդրումներ կատարողները եւ բաժնետոմսեր գնելու միջոցները եւ պահանջեց Քորտահիէն «ապահովական անցարգել մը դնելու» նշեալ մարպէս պետութեան իրաւունքներուն շուրջ:

Սատտ քննադատեց կառավարութիւնը եւ դիտել տուաւ, որ լիբանանցի ժողովուրդը կը գտնուի իշխող կառավարութեան, ընդդիմադիր կառավարութեան եւ անկարող ու սպառած կառավարութեան իշխանութեան տակ եւ հարց տուաւ, թէ նման կառավարութիւն մը ինչպէս կրնայ Լիբանանը առաջնորդել եւ շեշտեց, որ անելի յա պիտի ըլլայ կառավարութեան կամովին հեռացումը իշխանութենէն քան ատելութեամբ անոր փոփոխութիւնը:

Երեսփոխան Անթուան Հատտատ պետական պիտուէի նախագիծը նկատեց դասական եւ միօրինակ նախագիծ, որ կեդրոնացած է տուրքերու վրայ: Ան դրուատեց «Փարիզ - 2» ժողովը, որ տնտեսական տագնապի կացութեան մէջ առանձին ըլլալու մտավախութիւնը փարատած է եւ նկատել տուաւ, որ պարտքերը կրնան նուազիլ այլ ձեւերով եւ ոչ միայն տուրքերու ծրագիրով: Հատտատ ընդգծեց, որ ձեւերէն մեկը կրնայ ըլլալ ծովային կալուածներէ ստանալիք գումարները:

Երեսփոխան Սելիմ Սատտէ նկատել տուաւ, թէ ներկայ կառավարութիւնը յա վիճակի մէջ չի գտնուիր: Ան Վորակցութիւն յայտնեց դրամատուներու մէջ պահ դրուած գումարներու տոկոսներուն վրայ դրուած 5 առ հարիւր տուրքին:

Սատտէի խօսքէն ետք Պըրրի փակուած յայտարարեց նիստը եւ ըսաւ, որ երրորդ նիստը պիտի գումարուի յառաջիկայ երկուշաբթի օր՝ շեշտելով վարչապետ Հարիրիի կամ փոխ վարչապետ Իսամ Ֆարէսի ներկայութեան անհրաժեշտութիւնը, եթէ պատահի, որ վարչապետ Հարիրի վերադարձած չըլլայ Սէուտական Արաբիա կատարելիք իր պաշտօնական այցելութենէն:

Նշեց, որ նախանցեալ օրուան եւ երէկուան նիստերուն ընթացքին խօսք առին 30 երեսփոխաններ:

ԵՐԵԿՈՅԻՒՆ յատկանշական իրադարձութիւնը եղաւ Երեսփոխան Արաբժիի ելոյթը: Ան իր խօսքէն երկու էջեր վերջեց նիստին մթնոլորտը հանդարտ եւ խաղաղ պահելու համար:

السوق السوداء

Ի՞նչ կը գրեն Լիբանանեան օրագրութիւնը

السفير | النخباء | الزمان | المستقبل | الاخبار

Տեղական մամուլին 23 Յունուարի թիւին առաջին էջերուն գրեթէ բոլոր խորագիրները կը վերաբերին Միացեալ Նահանգներու կողմէ Իրաքի դէմ կազմակերպուող պատերազմին, որ կը հանդիսանայ վերջին շրջանին աշխարհը ցնցող իրադարձութիւնը:

«Նահար» գրած է, թէ Պոլսոյ մէջ աշխատանքներ ի գործ դրուած են իրաքեան պատերազմին առաջը առնելու համար, իսկ Պաղտատի մէջ ՄԱԿի պէնքի քննիչները խուզարկեցին մկկիթ մը: Ըստ թերթին, ամերիկեան ներկայութիւնը պիտի շարունակուի Իրաքի մէջ եւ ան կը պոռչացնէ Սատտամի սպանները:

Թերթը գրած է, թէ Ֆրանսա եւ Գերմանիա միացեալ ճակատով կ'ընդդիմանան Իրաքի դէմ ամերիկեան հասնական պատերազմին:

Լիբանանեան գետնի վրայ տեղի ունեցող իրադարձութիւններուն ակնարկելով՝ «Նահար» գրած է, թէ Վոր. Դապի Քրնասնի վերադարձը անակնկալի մատնեց լիբանանեան քաղաքական շրջանակները: Ըստ թերթին, զոյգ թեմաներով սուրիական պատգամ մը փոխանցուեցաւ Պէյրութի պատգամը կը վերաբերէր Իրաքի տագնապին եւ ներքին ճակատին հանդարտեցման:

«Լիուս»-ի համաձայն, Վորակցութիւնը Լիբանանի մէջ շրջապտոյտ մը կատարեցին՝ լիբանանցի պատասխանատուներէն պահանջելով տաք եւ բանակէճերու առիթ տուող թղթածրարները մէկ կողմ ձգել: Ըստ թերթին, վարչապետ Հարիրի յայտարարեց, թէ կառավարութիւնը պիտի շարունակէ իր աշխատանքը պետական պիտուէի նախագիծը գործադրելու համար:

Թերթը գրած է, թէ Պոլսոյ մէջ ժողովը սկսաւ եւ նախագահ Սատտ կ'ըսէ, թէ անոր գլխաւոր նպատակն է Իրաքի դէմ պատերազմը արգելել: Թերթը գրած է նաեւ, թէ ամերիկեան սպանալիքները կը շարունակուին եւ մկկիթներուն մէջ քննարկները տագնապ կը յառաջացնեն: Պոլսոյ կը սպանալ դատել իրաքեան բանակին սպանները, իսկ Փաուլը կը խօսի Իրաքի քարիւղի հանքերը գրաւելու մասին:

«Տիար» նշած է, թէ Հարիրի յատուկ քաղաքականութեամբ Պըրրէի կ'այցելէ լրատուական պիտուէի կողմէ նախարար Քորտահիէն: Ըստ թերթին, Սպանիոյ արտաքին գործոց

նախարարը ընդունած պահուն նախագահ Սատտ յայտարարած է, թէ Պոլսոյ ժողովին նպատակը Ապահովութեան Խորհուրդի թիւ 1441 որոշումին գործադրութիւնն է:

«Անուար» նշած է, թէ Շարէի Վոր. Լահուտի նամակ մը յանձնեց Ասատի կողմէ, ներկայութեամբ Պըրրիի, Հարիրիի եւ Վոր. Քրնասնի: Սուրիոյ նախագահը խորհուրդ կու տար առաջնախորհուրդին տալ Իրաքի թղթածրարին եւ ներքին ճակատի վրայ խաղաղութիւնը պահել: Թերթին համաձայն, ըստ ռուսական բանակին, Միացեալ Նահանգներու շահերուն: Պոլսոյ կը սպանալ դատել իրաքի պիտուէի կողմէն Փետրուարի կիտուն:

Ըստ «Սաֆիր»-ի, 6 երկիրներ Սատտամը կը հրահրեն ժողովրդավարական բարեկարգումներ ընելու:

«Սաֆիր» նաեւ նշած է, թէ Շիրաք եւ Երեսփոխանը կը պահանջեն, որ յաւելեալ քանի մը ամսուան ժամանակամիջոց տրուի պէնքի քննիչներուն: Փաուլը կը յայտարարէ. «Իրաքը երկար ժամանակի համար պիտի չգրաւենք եւ թէ քարիւղի իրաւունքները պիտի ըլլան մեր ձեռքը»:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, Շարէի Դէյրութի մէջ յայտարարեց, թէ Պոլսոյ ժողովին նպատակն է

մերժել ամէն տեսակի թշնամութիւն: Թերթը նշած է, թէ սուրիական - սպանական համախոհութիւնը կը կայանայ Իրաքի տագնապը խաղաղ միջոցներով լուծելու համար: Ըստ թերթին, Սուրիոյ նախագահը յայտարարած է, թէ պատերազմը կը վստահեցնուի Միացեալ Նահանգներու շահերուն: Պոլսոյ կը սպանալ դատել իրաքի պիտուէի կողմէն Փետրուարի կիտուն:

Ըստ «Պայրաք»-ի, Լահուտ իր Վորակցութիւնը յայտարարեց, Իրաքի տագնապը լուծելու առնչութեամբ Սուրիոյ ի գործ դրած ճիգերուն: Թերթը գրած է, թէ Պոլսոյ յայտարարած է, թէ ժամանակը եկած է Սատտամը հանուտուութեան կանչելու, իսկ Շիրաք դիտել կու տայ, թէ պատերազմը ստոյգ չէ:

Թերթերը իրենց առաջին էջերով նաեւ լուսարձակ տակ առած են Մադետիսի Ապտազրութեան ձախուի ընդհանուր քարտուղարին կոչոյցը՝ քակալութիւնը, Գաաի-րէի մէջ պաղտատիւնեան երկիւստութեան վերակտուր եւ վայն խանգարելու Շարիի աշխատանքները:

ԿԵՆՍԱՄԱԿԱՐԳԱԿԻ ԵՒ ԱՊՐՈՒՄՏԻ...

Շարունակուած 2րդ էջէն

Իր խօսքին մէջ նախարար Տիապ նշեց, թէ քաղաքացիներուն կենսամակարդակը եւ եկամուտը բարելաւելու համար անհրաժեշտ է արագացնել աշխատանքը:

Դոկտ. Մ. Կիտանեան իր խօսքին մէջ շեշտեց, որ առաջնախորհուրդին պետք է նկատուի քաղաքացիներուն կենսամակարդակի եւ ապրուստի պայմաններու բարելաւումը: Ան ըսաւ, որ ուսումնասիրութիւնը հիմնուած է հարցախոյզներու վրայ, որոնք պիտի կատարուին Լիբանանի բոլոր շրջաններուն մէջ՝ համայնարանականներու կողմէ: Ամբողջ աշխատանքը պիտի արժէ մէկ միլիոն 92 հազար տոլար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը ամէն օր առաւօտեան ժամը 9:00Ե կ'ստոր էտք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններու համար:

- 1) Հիւանդանոցային առողջապահական (ուիզարա եւ պետական հիւանդանոցային բուժում):
 - 2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնտուկ (Տաման):
 - 3) Ծանր եւ երկարատեւ բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի ապահովում:
 - 4) Գաղթականներու նախարարութեան հետ առնչուող հարցեր:
 - 5) Բնակարանային հարցերու նախարարութեան (hugt) դիմումներ:
 - 6) Աշխատանքի նախարարութեան հետ առնչուող հարցեր:
 - 7) Զաղաքապետութիւններու հետ կապուած հարցեր:
 - 8) Ընդհանուր Ապահովութեան Ապասարկութեան (Ամն Էլ Ամա) հետ կապուած հարցեր:
- Դիմողները պետք է ներկայանան «Ճաղգոյեան» կեդրոն, երկրորդ յարկ, Երեսփոխանական Գրասենեակ եւ կամ նախքան ներկայանալը հեռաձայնել 01 - 259881 եւ 01 - 242582 թիւերուն:
- Այսուհետեւ ամէն Հինգշաբթի առաւօտեան ժամը 9:00Ե 11:00 Երեսփոխանական Գրասենեակը կ'ապրի ըլլալ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Զոյնաբեան, որ պիտի ընդունի քաղաքացիներուն դիմումը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՅԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ
Ս. Ք. ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՉ

Կիրակի, 26 Յունուար 2003ին, Սարաշի Աղտին 83րդ տարեկիցին առիթով, հանդիսարար Ս. եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Նոր Սարաշի Արքեպիսկոպոսի Մանկանց Եկեղեցոյ մէջ:

Արարողութեան պիտի հանդիսապետ եւ քարոզիչ՝ **ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ**
Առաջնորդ Լիբանանի Հայոց

Սկիզբն ժամերգութեան՝	ժամը 7:30ին
Ս. պատարագ՝	ժամը 9:30ին
Եարոզ՝	ժամը 10:30ին
Շոգեհանգիստ՝	ժամը 11:30ին

Սիրով կը հրահրենք մեր հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու սոյն հոգեպարար արարողութեան եւ հաղորդուելու առաջնորդ սրբազան հօր պատգամով՝ յարգելով յիշատակը Սարաշի Աղտի նահատակներուն:

ՍՐԲ. ԶԱՆՍ. ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

24 ՅՈՒՆԻՍԻՐ - 30 ՅՈՒՆԻՍԻՐ 2003


ԵՐԿԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
«ԵՐԿԻՐ» ՇԱՐԱԹՎԹԵՐԹԻ

Էջ 5..... «Եթ մի տեղ կ'ոմնուիստները եւ Հայրիկեանը միասին են...»
Էջ 7..... Կառուցուածքային նորացման պարտադրանքը
Էջ 8..... «Կարողաց'ք, նախանձեցե'ք՝ ես քաղաքացի եմ...»
Էջ 10..... Կրթութեան վարչութեան ձեռքի գնում են
Էջ 12..... «Նուրջուլարը» թուրք ազգայնամական յարաբերութիւններուն

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:




7րդ Արարատ



(OFFICIAL SELECTION - OUT OF COMPETITION - CANNES 2002)

Charles Aznavour

Arsine Khanjian
Simon Abkarian



«Արարատ»ի որմագրը

ԱԹՈՄ ԷԿՈՅԵԱՆԻ «ԱՐԱՐԱՏ»Ը՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԾԱՐԾՈՂ ԺԱՊԱԲԷՆՆԵՐՈՒՄ ՌԱՀՎԻՐԱՆ

Համար օդաչուները չեն կարողանում երբևէ չփնջվելու համար երիտասարդ Ռաֆֆի Տէյվիտի կը պատմէ, թէ ինչպէս էտուրտ Սարոյեան կը պատրաստէ վանի ինքնապաշտպանութեան եւ Հայկական Յեղասպանութեան նուիրուած ժապաւէն մը, որուն օտանդակ նկարահանման նիւթ պիտի ծառայէ իր տուփերուն պարունակութիւնը: Անոր պատումին հանգրուանօրէն քակուող ծալքերէն ի յայտ կու գայ, որ բեմադրիչ էտուրտ Սարոյեան եւ ժապաւէնին բեմադրիչ Ռուբէն (Էրիք Պօղոսեան) ներկայ կը գտնուին Ռաֆֆիի մօր՝ արուեստի պատմաբան Անիին (Արսինէ Խանճեան) կողմէ Արշիլ Կորբէի մասին տրուած դասախօսութեան մը եւ կը յղանան արուեստագէտին կերպարը իրենց ժապաւէնին պատանի հերոսներէն մէկուն վերածելու գաղափարը: Անոնք կը դիմեն Անիի, որ տակաւին նոր հեղինակած է Արշիլ Կորբէի «Էնիկմա Էնտ Լուսալմիա»



Աթոմ Էկոյեան

վերջերուն պատումները լսած վերապրողներ եւ երեխաներ կը վերջինն այս դէպքերը»: Աթոմ Էկոյեանի «Արարատ»ը ազատօրէն կը կատարէ ժամանակի մէջ ոստումներ: Անոր գերիւրճողուած դրիպաշարին մէջ վերջին շուրջներ եւ յետագարած ակնարկներ կը կանխեն կամ կը յաջողեն էտուրտ Սարոյեանի ժապաւէնին դէպքերը՝ մէկ ամբողջութեան պարունակի մէջ փորձելով գետեղել զանոնք: Իր հետաքրքրական եւ անակնկալ դարձուածքներով հանդերձ, պէտք է նշել, որ Էկոյեանի «Արարատ»ը իր մատուցած նիւթերու, շօշափած թեմաներու բազմազանութեամբ եւ մասնաւոր մայր նիւթին առնթր իր տիպարներուն միջեւ բացայայտուող եւ զարգացող կապերով որոշակիօրէն կը ծանրաբեռնէ ինքզինքը, պատճառ դառնալով, որ հանդիսատեսը պրկուած ուշադրութեամբ հետեւի ժապաւէնին նիւթէ նիւթ եւ ժամանակաշրջանէ ժամանակաշրջան օստումներուն:

Աթոմ Էկոյեանի «Արարատ» ժապաւէնին առաջին տեսարաններուն մէջ բեմադրիչ էտուրտ Սարոյեան (Շարլ Ազնաւուր) կը փորձէ օգակայանին մաքսատունէն անցնել հատուն եւ գեղեցիկ նուռ մը: Մինչ մաքսատան պաշտօնեան կը փորձէ արգիլել նուռին «անցքը», էտուրտ Սարոյեան կը բացատրէ, թէ ինչ օրական նուռի մէկ հատիկ կը ճաշակէ՝ բախտաւորութեամբ համար: Ծարհատան ան կը հանէ դանակը, կը ճեղքէ նուռը եւ մեծ ախորժակով կը ճաշակէ հիւթեղ պտուղը, որպէսզի բախտը շարունակէ իր մարմնին մէջ մնալ: Ժապաւէնին աւարտին էտուրտ Սարոյեան իր ափին մէջ նուռն կարմրահատ հատիկներուն բախտարեութեան խորհրդանշանին վրայ կ'աւելցնէ նաեւ այն, որ Հայկական Յեղասպանութեան վերապրած իր մայրը աքսորի ճամբուն օրական նուռի հատիկ մը կը գետեղէր իր բերանը՝ երեւակայելով, որ այդ հատիկը ամբողջ պտուղ մըն է...

«Արարատ»ի լաւագոյն բաժիններէն հանդիսացող այս տեսարաններուն մէջ էտուրտ Սարոյեան կը շարունակէ նուռի հատիկներով իր անձին ու գործին մէջ ապրեցնել իր մօր ոգին: Եւ խորքին մէջ ժապաւէնին գլխաւոր հերոսներէն շատեր իրենց ուրոյն ձեւերով կը փորձեն կատարել նոյնը՝ մեծարել իրենց ծնողներուն յիշատակը, իրենց մէջ ապահովել Հայկական Յեղասպանութեան առնչուած անոնց յուշերուն շարունակականութիւնը եւ, վերջապէս, հասկնալ իրենց գոյութեան կանխապէս տուած տուող պատճառները: Էտուրտ Սարոյեանի բեմադրած «Արարատ»ը Հերոսին կողմէ իր մօր խոստացուած մեծարանքի տուրքն է: «Միշտ մօրս խոստացած էի, որ օր մը պիտի պատմեմ այս բաները», կ'ըսէ էտուրտ Սարոյեան: Ժապաւէնին գլխաւոր հերոսներէն երիտասարդ Ռաֆֆիին (Տէյվիտ Ալիէյ) Արեւմտահայաստան ճամբորդութիւնը սերտօրէն առնչուած է իր ծնողներին հետ յարաբերութեան, իսկ չափահաս Արշիլ Կորբէի, որ ժապաւէնին ընթացքին կ'աւելցնէ «Արուեստագէտը եւ իր մայրը» պատանուին ստեղծագործութեամբ, իր արուեստին միջոցով կը յաւերժացնէ իր սովահար մայրը:

«Արարատ»ի դրիպաշարը, Աթոմ Էկոյեանի այլ ժապաւէններուն նման, բազմախառն եւ ունի իրարու ազդեցուած նիւթերու շարք մը: Ան կ'արժարձէ ծնող-գաւակ փոխյարաբերութիւններ, անցեալի յիշողութիւններու հետ որոշ եզրերու յանդիւր եւ մանաւանդ՝ Հայկական Յեղասպանութեան եւ անոր ուրացման առթած հոգեկան տագնապները: Մաքսատան պաշտօնեան՝ Տէյվիտ (Քրիսթաֆֆը Փլամըր) կը գտնուի հանրապետական կոչուելու սեմին եւ իր վերջին գործը՝ Թուրքիայէն ժամանած երիտասարդի մը տուփերուն քննութիւնը կը վերածէ նաեւ իր տարիներու մաքսատան պաշտօնեայի հոտառութեան աւարտական քննութեան: Հետագային ժապաւէնի մը պատրաստութեան

գեղանկարներու շարքին խորագիրը կրող կենսագրական հատորը: Անոր այս գործը հրապարակային բախումներու դուռ կը բանայ իր երկրորդ եւ անձնասպան եղած ամուսինին աղըրկան եւ իր միջեւ: Այս լարուած վիճակը կ'ունենայ երկրորդանի ազդեցութիւն մէկ կողմէ Անիի եւ իր գաւակին՝ Ռաֆֆիի միջեւ, որուն հայրը տանհինգ տարի առաջ գոհուած է թուրք գիւղանաղէտի մը դէմ իր գործադրած ահաբեկչական արարքին ընթացքին, եւ միւս կողմէ՝ Ռաֆֆիի եւ անոր խորթ քրոջ եւ միաժամանակ ընկերուհիին յարաբերութիւններուն վրայ:

